

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԱՓՇՏԱԿՈՒՄԸ, ԱՆՕՐԻՆԱԿԱՆ
ՊԵՂՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՊՕՐԻՆԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ, ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ ԵՎ
ԴՐԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ
ԿԱՆԽԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՔ ԻՐԵՆՑ ԾԱԳՄԱՆ ԵՐԿԻՐ ՌԵՍԻՏՏՈՒՑԻԱՅԻ
ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Հունաստանի Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

ԳԻՏԱԿՑԵԼՈՎ, որ յուրաքանչյուր երկրի մշակութային ժառանգությունը եզակի է և տվյալ ազգի սեփականությունն է, և հետևաբար այն պետք է պատշաճ կերպով պաշտպանված լինի,

ԸՆԴԳԾԵԼՈՎ, որ Կողմերի միջև համագործակցությունը նպաստում է երկու ազգերի մշակութային ժառանգության և համայն մարդկությանը պատկանող մշակութային ժառանգության պահպանմանն ու պահպանությանը,

ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆՁՆԵԼՈՎ նպաստել մշակութային ժառանգության պաշտպանությանն ու պահպանմանը և կանխել դրանց ապօրինի փոխանցումը,

ՀԱՄԱՁԱՅՆ Մշակութային արժեքների ապօրինի ներմուծումը, արտահանումը և դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն արգելելու և կանխելու միջոցների մասին ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1970 թվականի կոնվենցիայի և դրա Գործառական ուղեցույցների, որոնց Կողմն են երկու պետություններն էլ, և վկայակոչելով Միավորված ազգերի կազմակերպության և ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարմինների համապատասխան բանաձևերը, ներառյալ՝ Մշակութային արժեքները ծագման երկրներ վերադարձնելու կամ ռեստիտուցիայի մասին Գլխավոր ասամբլեայի 2024 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ A/RES/79/133 բանաձևը և Ապագայի համար Պակտի մասին 2024 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ A/RES/79/1 բանաձևը, մասնավորապես՝ Ապագա սերունդների մասին հռչակագրի 15-րդ հանձնառությունը, որով խրախուսվում է ամրապնդված միջազգային համագործակցությունը հոգևոր, նախնիներին պատկանող, պատմական և

մշակութային արժեք ներկայացնող մշակութային արժեքները ծագման երկրներին վերադարձի կամ ռեստիտուցիայի վերաբերյալ, ներառյալ, բայց չսահմանափակվելով արվեստի գործերով, հուշարձաններով, թանգարանային նմուշներով, ձեռագրերով և փաստաթղթերով,

ԸՆԴԳԾԵԼՈՎ, որ ապօրինի պեղումները և մշակութային արժեքների ապօրինի ներմուծումը, արտահանումը, տարանցումը կամ մշակութային արժեքների նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը ոչնչացնում են առարկայի եզակի արժեքն ու տվյալ համատեքստում ունեցած առանձնահատկությունը, և լուրջ վնաս է հասցվում հնագիտական, պատմական և մշակութային նշանակություն ունեցող վայրերին,

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ մշակութային արժեքների ապօրինի շրջանառության մեջ առկա է կազմակերպված հանցավորության ներգրավվածությունը, և այն, որ Կողմերի միջև համագործակցությունը՝ մշակութային արժեքների հափշտակման, անօրինական պեղումների և ապօրինի ներմուծման, արտահանման, տարանցման կամ դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցման կանխարգելման և դրանց վերադարձի կամ ռեստիտուցիայի խթանման վերաբերյալ, արդյունավետ միջոց է յուրաքանչյուր ազգի ինքնության պահպանման հարցում,

համաձայնեցին հետևյալի մասին.

ՀՈԴՎԱԾ I

Կողմերը համաձայնում են անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել մշակութային արժեքների հափշտակման, անօրինական պեղումների և ապօրինի ներմուծման, արտահանման, տարանցման կամ դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցման դեմ պայքարելու համար՝ Մշակութային արժեքների ապօրինի ներմուծումը, արտահանումը և դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն արգելելու և կանխելու միջոցների մասին ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1970 թվականի կոնվենցիայի, այն միջազգային կոնվենցիաների, որոնց Կողմն են երկու պետություններն էլ, և իրենց համապատասխան ազգային օրենսդրության համաձայն:

ՀՈԴՎԱԾ II

Կողմերը համարում են, որ «մշակութային արժեք» եզրույթը ներառում է, ի թիվս այլնի, իրենց մշակութային ժառանգությանը պատկանող

հնագիտական, հնէաբանական, գեղարվեստական, պատմական և մշակութային արժեքները: Սույն Համաձայնագրի I և II հավելվածները ներառում են համապատասխանաբար Հունաստանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված մշակութային օբյեկտների տեղեկատվական ցանկը:

ՀՈԴՎԱԾ III

1. Կողմերը փոխանակում են տեղեկություններ մյուս Կողմի համար հետաքրքրություն ներկայացնող մշակութային արժեքների հափշտակման, անօրինական պեղումների և ապօրինի ներմուծման, արտահանման, տարանցման կամ դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցման, ինչպես նաև առգրավման, աճուրդների և վաճառքի իրականացման դեպքերի ու միջադեպերի վերաբերյալ:

2. Կողմերն այնքանով, որքանով թույլատրվում է ազգային ընթացակարգերի գաղտնիության կանոններով, մշակութային արժեքների ապօրինի շրջանառության վերաբերյալ փոխանակում են տեղեկություններ, որոնք հասանելի են իրենց ազգային ծառայությունների և վարչակազմերի, այդ թվում՝ ոստիկանության և մաքսային մարմինների համար:

3. Կողմերը գողացված կամ ապօրինի շրջանառված մշակութային արժեքների վերաբերյալ ամբողջ տեղեկությունը փոխանցում են նավահանգիստներում, օդանավակայաններում և պետական սահմաններին գտնվող իրենց համապատասխան մաքսային և ոստիկանության մարմիններին՝ դրանց վաղ հայտնաբերմանը նպաստելու, ինչպես նաև համապատասխան կանխարգելիչ և ուղղիչ միջոցառումների բացահայտումն ու իրականացումը դյուրացնելու նպատակով:

4. Կողմերը հետամուտ են լինում և զարգացնում են անձնակազմի փոխանակումն ու վերապատրաստումը կանոնավոր հիմունքներով՝ մշակութային արժեքների ապօրինի տեղաշարժի կանխման, իրենց ծագման երկրներ ռեստիտուցիայի և վերադարձնելու ոլորտում: Վերապատրաստման ծրագիրը ներառում է, սակայն չի սահմանափակվում մշակութային արժեքների շուկաների բնագավառով, մշակութային արժեքների ներմուծման և արտահանման, օրենսդրության և օրենքների նախագծման, միջազգային հարաբերություններում տեղեկությունների հավաքագրման և համակարգմանն առնչվող հարցերով: Անձնակազմի փոխանակման և վերապատրաստման այս

գործողություններն իրականացվում են մասնակից հաստատությունների ռեսուրսների առկայության դեպքում:

ՀՈԴՎԱԾ IV

1. Կողմերն աջակցում են Կողմերի տարածքից ապօրինաբար հեռացված մշակութային արժեքների հայտնաբերման և վերադարձի հարցում՝ իրենց գործող օրենսդրությանը, միջազգային կոնվենցիաներին և համաձայնագրերին համապատասխան:

2. Ապօրինի կերպով դուրս բերված մշակութային արժեքները վերականգնելու և վերադարձնելու հարցումը կատարվում է դիվանագիտական ուղիներով և ներառում է պահանջը հիմնավորող փաստաթղթերը:

3. Կողմերից յուրաքանչյուրը պետք է կանխի առանց մյուս Կողմի իրավասու մշակութային մարմնի կողմից տրված համապատասխան արտահանման մասին թույլտվության իր տարածք մշակութային արժեքների ներմուծումը: Նման թույլտվություն չունեցող իրերը ենթակա են բռնագրավման, ինչի մասին մյուս Կողմը ծանուցվում է դիվանագիտական ուղիներով: Կողմերը փորձում են պարզել Քրեական ոստիկանության միջազգային կազմակերպության (ՔՈՄԿ-ԻՆՏԵՐՊՈԼ) գողացված արվեստի գործերի տվյալների բազայում՝ արդյոք կազմակերպության անդամ երկրներից որևէ մեկի խնդրանքով նման գույքը ենթակա է բռնագրավման:

4. Երկու Կողմերը իրենց տարածքում գործող օրենսդրությանը համապատասխան՝ սույն Համաձայնագրի համաձայն վերականգնված և վերադարձված բոլոր մշակութային արժեքներն ազատում են մաքսատուրքերից և այլ հարկերից:

5. Հարցում ներկայացնող Կողմը կրում է սույն Համաձայնագրի շրջանակներում իրականացվող մշակութային արժեքների վերականգնման և ռեստիտուցիայի հետ կապված ծախսերը:

ՀՈԴՎԱԾ V

1. Սույն Համաձայնագիրը կարող է փոփոխվել Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ: Ցանկացած այդպիսի փոփոխություն ուժի մեջ է մտնում VII հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն:

2. Սույն Համաձայնագրի մեկնաբանությունից կամ իրականացումից բխող ցանկացած վեճ Կողմերի միջև կարգավորվում է բարեկամաբար՝

դիվանագիտական ուղիներով անցկացվող խորհրդակցությունների միջոցով:

ՀՈԴՎԱԾ VI

Սույն Համաձայնագրի իրականացման համար պատասխանատու մարմիններն են Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը և Հունաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը:

ՀՈԴՎԱԾ VII

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում վերջին գրավոր ծանուցումն ստանալու ամսաթվին, որով Կողմերը դիվանագիտական ուղիներով միմյանց ծանուցում են սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ իրենց բոլոր ներքին իրավական ընթացակարգերի ավարտի մասին: Համաձայնագիրն ուժը պահպանում է անորոշ ժամկետով, եթե Կողմերից որևէ մեկը չի դադարեցնում այն՝ դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցելով մյուս Կողմին՝ դադարեցման նախատեսված ամսաթվից առնվազն վեց (6) ամիս առաջ:

Կատարված է *4. Աթենք*.....ում*24.07.2025* ին երկու քնօրինակից՝ յուրաքանչյուրը կազմված հայերենով, հունարենով և անգլերենով, ընդ որում, բոլոր տեքստերը հավասարազոր են: Հայերեն և հունարեն տեքստերի միջև մեկնաբանման հետ կապված տարաձայնություններ առաջանալու դեպքում գերակայում է անգլերեն տեքստը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝



ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ



ՀԱՎԵԼՎԱԾ I

ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕՐՅԵԿՏՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՑԱՆԿ

«Մշակութային օբյեկտներ» նշանակում է մարդկության գոյության և անհատական և հավաքական ստեղծարարության վկայություններ:

«Հուշարձաններ» նշանակում է մշակութային օբյեկտներ, որոնք երկրի մշակութային ժառանգությանը պատկանող նյութական վկայություններ են և ենթակա են հատուկ պահպանության՝ հիմք ընդունելով հետևյալ տարբերությունները.

i) «Հնագույն հուշարձաններ կամ հնություններ» նշանակում է բոլոր մշակութային օբյեկտները, որոնք թվագրվում են նախապատմական, հնագույն, բյուզանդական և հետբյուզանդական ժամանակներից մինչև 1830 թվականը:

ii) Հնագիտական հուշարձանների շարքին են դասվում նաև քարանձավները և հնէաբանական մնացորդները, երբ առկա են դրանց կապը մարդու գոյության հետ հաստատող ապացույցներ:

iii) «Վերջին շրջանի հուշարձաններ» նշանակում է մշակութային օբյեկտներ, որոնք թվագրվում են 1830 թվականից հետո, որոնք ենթակա են պաշտպանության, քանի որ ներկայացնում են պատմական, գեղարվեստական և գիտական կարևորություն:

iv) «Անշարժ հուշարձաններ» նշանակում է հուշարձաններ, որոնք ամրացված են եղել և մնացել են ցամաքում կամ ծովի հատակին կամ լճերի կամ գետերի հատակին, ինչպես նաև հուշարձաններ, որոնք հայտնաբերվել են ցամաքում կամ ծովի կամ լճերի կամ գետերի հատակին և չեն կարող դուրս բերվել առանց վնաս պատճառելու դրանց վկայություն հանդիսացող արժեքին: Անշարժ հուշարձանները ներառում են նաև ինստալացիաները, կառույցները և դեկորատիվ և այլ տարրերը, որոնք հուշարձանների անբաժանելի մասն են, ինչպես նաև դրանց շրջակայքը:

v) «Շարժական հուշարձաններ» նշանակում է հուշարձաններ, որոնք անշարժ չեն.

ա) բոլոր հուշարձանները, որոնք թվագրվում են մինչև 1453 թվականը,

բ) 1453 թվականից և մինչև 1830 թվականը թվագրվող հուշարձանները, որոնք պեղումների կամ այլ հնագիտական հետազոտությունների գտածոներ են, կամ անշարժ հուշարձաններից հանված, ինչպես նաև միևնույն ժամանակաշրջանին թվագրվող սրբապատկերները և

պաշտամունքի համար օգտագործվող այլ կրոնական առարկաները,

գ) 1453 թվականից և մինչև 1830 թվականը թվագրվող, «բ» ենթակետին չպատկանող հուշարձանները, որոնք դասակարգվում են որպես հուշարձան, քանի որ ունեն սոցիալական, տեխնիկական, ժողովրդական, էթնոլոգիական, գեղարվեստական, ճարտարապետական, արդյունաբերական կամ ընդհանուր պատմական կամ գիտական նշանակություն,

դ) վերջին շրջանի՝ հարյուր տարուց ավելի հնության մշակութային օբյեկտները, որոնք դասակարգված են որպես հուշարձաններ, քանի որ ունեն սոցիալական, տեխնիկական, ժողովրդական, էթնոլոգիական, գեղարվեստական, ճարտարապետական, արդյունաբերական կամ ընդհանուր պատմական կամ գիտական նշանակություն, և

ե) վերջին շրջանի՝ հարյուր տարուց պակաս հնության մշակութային օբյեկտներ, որոնք դասակարգված են որպես հուշարձաններ, քանի որ ունեն առանձնահատուկ սոցիալական, տեխնիկական, ժողովրդական, էթնոլոգիական, գեղարվեստական, ճարտարապետական, արդյունաբերական կամ ընդհանուր պատմական կամ գիտական նշանակություն:

VI. V կետի «ա» և V կետի «բ» ենթակետերում վերը նշված հնագույն շարժական հուշարձանները պաշտպանված են օրենքով՝ առանց որևէ վարչական ակտի կայացման անհրաժեշտության: V կետի «գ», «դ» և «ե» ենթակետերում նշված մշակութային օբյեկտները դասակարգվում են որպես հուշարձաններ մշակույթի նախարարի կողմից պաշտոնական տեղեկագրում հրապարակված որոշմամբ:

VII. Մշակույթի նախարարի՝ պաշտոնական տեղեկագրում հրապարակված որոշմամբ որպես հուշարձաններ կարող են դասակարգվել բացառապես միևնույն տեսակի շարժական մշակութային օբյեկտները, որոնք ներկայացնում են առանձնահատուկ սոցիալական, տեխնիկական, ժողովրդական, էթնոլոգիական կամ ընդհանուր պատմական, գեղարվեստական կամ գիտական հետաքրքրություն, պայմանով, որ դրանք հազվագյուտ նմուշներ են, դրանց նույնականացման գործընթացը բարդ է, և առկա է կորելու կամ վնասվելու վտանգ:

ՀՈՒՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԴԱՍԱԿԱՐԳԵՐԸ

Ա. Քար

1. Քանդակ կամ բարձրաքանդակներ՝ առանձին կամ անշարժ հուշարձաններից ամբողջական կամ բեկորներով հանված: Նման հուշարձանի կառուցվածքային և ճարտարապետական տարրերը նույնպես:

2. Շարժական քանդակներ կամ բարձրաքանդակներ:
3. Քարի վրա արված արձանագրություններ:
4. Արձանագրություններ:
5. Անոթներ և սպասք:
6. Սարկոֆագներ:
7. Ձեռքեր:
8. Միջոցներ/սարքեր, կշեռքներ կամ խարիսխներ:
9. Կնիքներ:
10. Ջարդեր:
11. Տնային տնտեսության պարագաներ/կահույք:
12. Խորաններ - նվիրաբերության սեղաններ:

Բ. Մետաղ

1. Քանդակներ կամ բարձրաքանդակներ՝ առանձին կամ անշարժ հուշարձաններից ամբողջական կամ բեկորներով հանված:

2. Շարժական քանդակներ կամ բարձրաքանդակներ:
3. Անոթներ:
4. Ջարդեր:
5. Ձեռքեր:
6. Միջոցներ/սարքեր, կշեռքներ:
7. Արձանագրություններ:
8. Կնիքներ:
9. Տնային տնտեսության պարագաներ/ կահույք:
10. Մետաղադրամներ:
11. Շքանշաններ:
12. Կապարակնիքներ:
13. Կրոնական պաշտամունքի առարկաներ:
14. Առօրյա օգտագործման սպասք և իրեր:
15. Գործիքներ:

Գ. Կերամիկա

1. Քանդակներ կամ բարձրաքանդակներ՝ առանձին կամ անշարժ հուշարձաններից ամբողջական կամ բեկորներով հանված: Նման հուշարձանի կառուցվածքային և ճարտարապետական տարրերը նույնպես:

2. Շարժական քանդակներ կամ բարձրաքանդակներ:
3. Անոթներ:
4. Սպասք:
5. Զարդեր:
6. Միջոցներ/սարքեր, կշեռքներ:
7. Կավի վրա արված արձանագրություններ:
8. Կնիքներ:
9. Գործիքներ:
10. Սարկոֆագներ:

Դ. Ոսկոր - Փղոսկր

1. Քանդակներ կամ բարձրաքանդակներ՝ առանձին կամ անշարժ հուշարձաններից ամբողջական կամ բեկորներով հանված:

2. Զարդեր/ անձնական օգտագործման պարագաներ:
3. Միջոցներ/գործիքներ:
4. Կնիքներ:

Ե. Փայտ

1. Փայտյա փորագրություններ և բարձրաքանդակներ՝ առանձին կամ անշարժ հուշարձաններից ամբողջական կամ բեկորներով հանված:

2. Շարժական փայտյա փորագրություններ:
3. Անձնական օգտագործման պարագաներ:
4. Կահույք/ հոգևոր արժեք ներկայացնող պարագաներ:
5. Սրբապատկերներ և ներկված մակերեսներ:

Զ. Ապակի

1. Անոթներ:
2. Զարդեր/ անձնական օգտագործման պարագաներ:
3. Առօրյա օգտագործման առարկաներ և դեկորատիվ պարագաներ:

4. Հոգևոր արժեք ներկայացնող պարագաներ:

Է. Հախճապակի, Ստեատիտ, Ալաբաստեր,
Կիսաթանկարժեք քարեր և այլն

1. Քանդակներ:
2. Անոթներ/առօրյա օգտագործման առարկաներ:
3. Միջոցներ/սպասք:
4. Կնիքներ:
5. Զարդեր/ անձնական օգտագործման պարագաներ:
6. Կահույք/ հոգևոր արժեք ներկայացնող
պարագաներ/սրբապատկերներ:

Ը. Գործվածք

Գործվածք, ներառյալ՝ հոգևոր արժեք ներկայացնող պարագաները:

Ի. Թղթագլաններ-մագաղաթ-ձեռագրեր-գրքեր

1. Թղթագլաններ, մագաղաթներ, ձեռագրեր, գրքեր՝ ամբողջական
կամ մասնատված, ներառյալ՝ հոգևոր արժեք ներկայացնող պարագաները:
2. Նախապատկերներ (ուրվանկարներ):

Թ. Նկարներ

Առանձին կամ անշարժ հուշարձաններից հանված նկարներ՝ անկախ
նրանից, թե ինչպիսի նյութերից են դրանք պատրաստված, կամ ինչի վրա են
պատկերված:

Ժ. Խճանկարներ

Առանձին կամ անշարժ հուշարձաններից հանված խճանկարներ,
ներառյալ՝ հոգևոր արժեք ներկայացնող, շարժական և անշարժ
աշխատանքները:

ՀԱՎԵԼՎԱԾ II
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՕՐՅԵԿՏՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՑԱՆԿ

«Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն մշակութային արժեքներ են համարվում մարդկային հասարակության կենսագործունեության արգասիք համարվող առարկաները և ստեղծագործությունները, որոնք, անկախ ստեղծման ժամանակից, ունեն հնագիտական, ազգագրական, պատմական, կրոնական, գեղարվեստական, գիտական կարևոր նշանակություն:

Մշակութային արժեքների տեսակներն են.

1) պատմական, ներառյալ՝ ժողովրդի կյանքի հիշարժան դեպքերի, հասարակության և պետության զարգացման, գիտության և ճարտարագիտության պատմության, ինչպես նաև նշանավոր մարդկանց (պետական, քաղաքական, հասարակական, մշակութային գործիչների, ազգային հերոսների) կյանքին ու գործունեությանն առնչվող առարկաներ, ընտանեկան մասունքներ.

2) հնագիտական հետազոտություններից և պեղումներից ստացված գտածոներ, ինչպես նաև հողային, շինարարական, հողաբարելավման և այլ աշխատանքների ժամանակ հայտնաբերված պատմահնագիտական առարկաներ.

3) գեղարվեստական արժեքներ, ներառյալ՝

ա) ամբողջովին կամ մասամբ ձեռքով արված պատկերներ և նկարներ՝ կատարված ցանկացած միջոցով ու նյութերով,

բ) ցանկացած նյութից պատրաստված քանդակներ,

գ) ցանկացած նյութից արված գեղարվեստական հորինվածքներ և համակցված կառուցվածքներ (մոնտաժներ),

դ) պաշտամունքային նշանակություն ունեցող գեղարվեստորեն ձևավորված առարկաներ, ներառյալ՝ սրբապատկերներ (իկոնաներ),

ե) փորագրություններ, փորագրանկարի արտատպություններ, վիմատպություններ և դրանց այլ դրոշմվածքաձևեր,

զ) կիրառական արվեստի գործեր, ներառյալ՝ ապակուց, կավից, փայտից, երկաթից, ոսկրից, գործվածքեղենից և այլ նյութերից պատրաստված գեղարվեստական իրեր,

է) ավանդական ժողովրդական արհեստների ստեղծագործություններ.

4) պատմական և գեղարվեստական, ներառյալ՝ գրական հուշարձանների բաղկացուցիչ մասեր և բեկորներ.

5) ձեռագիր և տպագիր գրական, պատմագիտական, պաշտամունքային արժեք ներկայացնող հուշարձանների բաղկացուցիչ մասեր և բեկորներ.

6) առանձին կամ հավաքածու հնագույն գրքեր, փաստաթղթեր.

7) հազվագյուտ ձեռագրեր և փաստաթղթային հուշարձաններ, արխիվներ, ներառյալ՝ ձայնագրման, տեսագրման, լուսանկարչական և կինոարխիվներ.

8) երաժշտական գործիքներ.

9) առանձին կամ հավաքածու փոստային նամականիշեր, այլ նամականիշային նյութեր.

10) հնագույն առարկաներ՝ գործիքներ, կավագործական իրեր, մակագրություններ, դրամներ, շքանշաններ, մեդալներ, կնիքներ, զենք, ինչպես նաև հավաքածուի համար նախատեսված այլ առարկաներ.

11) բուսական, կենդանական և երկրաբանական հավաքածուներ և նմուշներ, հանքաբանության, անատոմիայի և հնէաբանության համար հետաքրքրություն ներկայացնող առարկաներ.

12) կահույք, գորելեններ, գորգեր, կարպետներ, տարազներ.

13) ազգագրական, մարդաբանական նյութեր և բանահյուսական նյութերի անտիպ ժողովածուներ, հնատիպ հրատարակություններ.

14) ճարտարապետական և կոթողային արվեստի հուշարձանների բաղկացուցիչ մասեր և բեկորներ.

15) այլ առարկաներ, ներառյալ՝ պատմական, գեղարվեստական, գիտական կամ մշակութային այլ նշանակություն ունեցող պատճեններ, որոնք, որպես պատմության և մշակույթի հուշարձաններ, վերցված են պետական պահպանության.

16) տրանսպորտային միջոցներ՝ արտադրված մինչև 1951 թվականը:

**AGREEMENT
BETWEEN
THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA AND THE
GOVERNMENT OF THE HELLENIC REPUBLIC
ON THE PREVENTION OF THEFT, ILLEGAL EXCAVATION AND
ILLICIT IMPORT, EXPORT AND TRANSFER OF OWNERSHIP OF
CULTURAL PROPERTY AND ITS RESTITUTION TO ITS COUNTRY OF
ORIGIN**

The Government of the Republic of Armenia and the Government of the Hellenic Republic, hereinafter - “The Parties”,

RECOGNIZING that the cultural heritage of each country is unique and the property of each nation and that it must therefore be adequately protected;

EMPHASIZING that cooperation between the Parties shall contribute to the preservation and conservation of the cultural heritage of both nations and the cultural heritage of humankind;

COMMITTED to contributing to the protection and preservation of cultural heritage and to preventing its illicit transfer;

IN ACCORDANCE with the 1970 UNESCO Convention on the Means of Prohibiting and Preventing the Illicit Import, Export and Transfer of Ownership of Cultural Property and its Operational Guidelines, to which both States are parties and recalling the relevant Resolutions of the United Nations and UNESCO bodies; including General Assembly Resolution A/RES/79/133, of 6 December 2024, on the Return or Restitution of Cultural Property to the Countries of Origin and General Assembly Resolution A/RES/79/1, of 22 September 2024, on the Pact for the Future, in particular Commitment 15 of the Declaration on Future Generations, encouraging strengthened international cooperation on the return or restitution of cultural properties of spiritual, ancestral, historical and cultural value to countries of origin,

including but not limited to objets d'art objects d'art, monuments, museum pieces, manuscripts and documents;

EMPHASIZING that the illegal excavation and illicit import, export, transit or transfer of ownership of cultural property destroy the unique value and context of the object and cause serious harm to places of archaeological, historical and cultural importance;

CONSIDERING that organized crime is involved in the trafficking of cultural property and that cooperation between the Parties in the field of the prevention of the theft, illegal excavation and illicit import, export, transit or transfer of ownership of cultural property and the promotion of its restitution or return serves as an effective means to preserve the identity of each nation;

Have agreed on the following:

ARTICLE I

The Parties agree to take the necessary measures concerning the fight against the theft, illegal excavation and illicit import, export transit or transfer of ownership of cultural property, in accordance with the 1970 UNESCO Convention on the Means of Prohibiting and Preventing the Illicit import, Export and Transfer of Ownership of Cultural Property, international conventions to which both of them are parties and their respective national legislation.

ARTICLE II

The Parties consider the term "cultural property" to include, inter alia, archaeological, paleontological, artistic, historical and cultural property belonging to their cultural heritage. Annex I and II to this Agreement include the reference list of cultural property defined under the legislation of the Hellenic Republic and the Republic of Armenia, respectively.

ARTICLE III

1. The Parties shall exchange information through the mechanisms established for such purpose on cases or incidents of theft, illegal excavation and illegal import,

export, transit or transfer of ownership and seizures, auctions and sales of cultural property which are of interest to the other Party.

2. The Parties shall exchange information available to their national services and administrations, including the police and custom authorities, regarding the illegal trafficking of cultural property to the extent made possible by the national rules of the confidentiality of the procedures.

3. The Parties shall distribute all information regarding stolen or illegally trafficked cultural property to their respective customs and police authorities in ports, airports and borders to contribute to their early detection and facilitate the identification and application of the pertinent preventive and remedial measures.

4. The Parties shall pursue and strengthen the exchange and training of personnel on a regular basis in the field of the prevention of illegal movement, restitution and return of cultural property to their countries of origin. This training shall include, but shall not be limited to, aspects of cultural property markets, the import and export of cultural property, legislation and law drafting, information collecting and coordination in international affairs. These activities of exchange and training of personnel shall be subject to the availability of resources of the participating institutions.

ARTICLE IV

1. The Parties shall assist each other to locate and retrieve cultural property which has been illegally removed from the territory of the Parties, in accordance with their laws, international conventions and agreements in force.

2. The request for the recovery and return of illegally removed cultural property shall be made through diplomatic channels and shall include the documentation supporting the claim.

3. Each Party shall prevent the entry into their respective territory of cultural property without the proper export authorization issued by the competent cultural authority of the other Party. Objects without such authorization shall be confiscated and this action shall be notified to the other Party through diplomatic channels. The Parties shall endeavour to verify in the Stolen Works of Art Database of the International Criminal

Police Organization ICPO-INTERPOL if such property is subject to a seizure application on the request of any of the member countries of the organization.

4. Both Parties shall exempt all cultural property recovered and returned pursuant to this Agreement from customs duties and other taxes in accordance with their applicable national legislation.

5. The requesting Party shall bear the costs related to the recovery and restitution of cultural property undertaken within the framework of this Agreement.

ARTICLE V

1. This Agreement may be amended by written agreement of the Parties. Any such amendment shall enter into force in accordance with the procedure set forth in Article VII.

2. Any dispute arising from the interpretation or implementation of this Agreement, shall be resolved amicably through consultations between the Parties through diplomatic channels.

ARTICLE VI


The Ministry of Education, Science, Culture and Sports of the Republic of Armenia and the Ministry of Culture of the Hellenic Republic shall be the authorities responsible for the implementation of this Agreement.

ARTICLE VII


This Agreement shall enter into force on the date of the receipt of the last of the written notifications whereby the Parties inform each other, through diplomatic channels, about the completion of their respective internal legal procedures required for the entry into force of this Agreement. It shall remain in force for an indefinite period, unless either Party terminates it by giving a written notice to the other Party, through diplomatic channels, at least six (6) months prior to the intended date of termination.

Done in *Athens* on *22 07 2025* in two originals each in the Armenian, Greek and English languages, all texts being equally authentic. In case of divergence in the interpretation between texts in Armenian and Greek, the English text shall prevail.

FOR THE GOVERNMENT OF THE
OF REPUBLIC OF ARMENIA



FOR THE GOVERNMENT OF THE
HELLENIC REPUBLIC



ANNEX I

REFERENCE LIST OF CULTURAL OBJECTS DEFINED UNDER THE LEGISLATION OF THE HELLENIC REPUBLIC

"Cultural Objects" shall mean testimonies of the existence and the individual and collective creativity of humankind.

"Monuments" shall mean cultural objects which constitute material testimonies belonging to the cultural heritage of the country and which deserve special protection on the basis of the following distinctions:

- i) "Ancient Monuments or Antiquities" shall mean all cultural objects dating back to prehistoric, ancient, Byzantine and post-Byzantine times up to 1830.
- ii) Archaeological Monuments shall also include caves and paleontological remains for which there is evidence that they are related to human existence.
- iii) "Recent Monuments" shall mean cultural objects dating from after 1830, which deserve protection due to their historical, artistic or scientific importance.
- iv) "Immovable Monuments" shall mean monuments which have been attached to and remain on the ground or on the seabed or on the bed of lakes or rivers, as well as monuments which are found on the ground or on the seabed or on the bed of lakes or rivers and cannot be removed without damage to their value as testimonies. Immovable monuments shall also include installations, structures and the decorative and other elements which form an integral part of monuments, as well as their surroundings.
- v) "Movable Monuments" shall mean monuments which are not immovable.
 - a) all monuments dating up to 1453
 - b) monuments dating after 1453 and up to 1830, which constitute finds from excavations or other archaeological research, or have been removed from immovable monuments as well as icons and other religious objects used for worship, dating from the same period
 - c) monuments dating after 1453 and up to 1830 which are not subject to subparagraph b and are classified as monuments due to their social, technical, folk, ethnological, artistic, architectural, industrial or in general historical or scientific significance

d) recent cultural objects more than one hundred years old which are classified as monuments due to their social, technical, folk, ethnological, artistic, architectural, industrial or in general historical or scientific significance and

e) recent cultural objects less than one hundred years old which are classified as monuments due to their particular social, technical, folk, ethnological, artistic, architectural, industrial or in general historical or scientific significance

VI. Ancient movable monuments referred to above in subparagraphs V (a) and V (b) are protected by law, without need for the issuance of any administrative act. Cultural objects referred to in paragraph V (c), (d) and (e) shall be classified as monuments, by a decision of the Minister of Culture, published in the Official Gazette.

VII. A decision of the Minister of Culture, published in the Official Gazette, may exceptionally classify as monuments categories of movable cultural objects of the same kind that present particular social, technical, folk, ethnological or in general historical, artistic or scientific interest, provided that they are rare, their identification is difficult and there is danger of being lost or damaged.

INDICATIVE CATEGORIES OF GREEK CULTURAL PROPERTY

A. Stone

1. Sculpture or reliefs, independent or removed whole or in fragments from immovable monuments. Likewise, structural and architectural elements of such monument.
2. Movable sculpture or reliefs.
3. Rock inscriptions.
4. Inscriptions.
5. Vessels and utensils.
6. Sarcophagi.
7. Weapons.
8. Tools/Devices, Weights and Anchors.
9. Seals.
10. Jewelry.
11. Household Items/Furniture.
12. Altars - Offering tables.

B. Metal

1. Sculptures or reliefs, independent or removed whole or in fragments from immovable monuments.
2. Movable sculptures or reliefs.
3. Vessels.
4. Jewelry.
5. Weapons.
6. Tools/Devices, Weights.
7. Inscriptions.
8. Seals.
9. Household items /Furniture.
10. Coins.
11. Medals.
12. Lead seals.
13. Objects of religious worship.
14. Utensils and objects of daily use.
15. Instruments.

C. Ceramic

1. Sculptures or reliefs, independent or removed whole or in fragments from monumental buildings. Likewise, structural and architectural elements of such monument.
2. Movable sculptures or reliefs.
3. Vessels.
4. Utensils.
5. Jewelry.
6. Tools/Devices, Weights.
7. Clay Inscriptions.
8. Seals.
9. Instruments.
10. Sarcophagi.

D. Bone - Ivory

1. Sculptures or reliefs, independent or removed whole or in fragments from immovable structures.
2. Jewelry/Personal items.
3. Tools/Instruments.
4. Seals.

E. Wood

1. Woodcarvings and reliefs, independent or removed whole or in fragments from immovable monuments.
2. Movable woodcarvings.
3. Personal items.
4. Furniture/Ecclesiastical items.
5. Icons and painted surfaces.

F. Glass

1. Vessels.

2. Jewelry/Personal items.
3. Objects of daily use and decorative items.
4. Ecclesiastical items.

G. Faience. Steatite. Alabaster. Semiprecious Stones and other

1. Sculptures.
2. Vessels/Objects of daily use.
3. Tools/Utensils.
4. Seals.
5. Jewelry/Personal items.
6. Furniture/Ecclesiastical items/Icons.

H. Fabric

Fabric including ecclesiastical items.

I. Scrolls - Parchments - Manuscripts - Books

1. Scrolls, Parchments, Manuscripts, Books, intact or in fragments, including ecclesiastical items.
2. Preparatory drawings (cartoons).

J. Paintings

Paintings independent or removed from immovable monuments, irrespective of materials of which they are made or on which they are painted.

K. Mosaics

Mosaics independent or removed from immovable monuments, including ecclesiastical, movable and immovable works.

ANNEX II

REFERENCE LIST OF CULTURAL OBJECTS DEFINED UNDER THE LEGISLATION OF THE REPUBLIC OF ARMENIA

Pursuant to the Law of the Republic of Armenia "On export and import of cultural property", cultural property shall be the objects and works considered to be products of human life activities, which, irrespective of their creation, have an important archaeological, ethnographic, historical, religious, artistic and scientific significance.

Types of cultural property shall be the following:

- (1) historical objects, including those of memorable events relating to the life of the people, the development of the society and the state, the history of science and engineering, as well as those relating to the life and activities of outstanding persons (statesmen, political, public, cultural figures, national heroes), and family relics;
- (2) findings discovered as a result of archaeological studies and excavations, as well as historical-archaeological objects discovered during earthworks, construction, soil amelioration and other works;
- (3) artistic property, including:
 - (a) fully or partially hand-made images and pictures made by any means and of any materials;
 - (b) sculptures made of any material;
 - (c) artistic designs and combined structures (installations) made of any material;
 - (d) artistically designed objects of worship, including icons;
 - (e) carvings, reprints of engravings, lithographic prints and other imprints thereof;
 - (f) pieces of applied art, including artistic objects made of glass, clay, wood, iron, bone, fabric and other materials;
 - (g) works of traditional national crafts;

- (4) component parts and fragments of historical and artistic, including literary monuments;
- (5) component parts and fragments of handwritten and printed monuments of literary, historical or cultic value;
- (6) antique books either separate or in collection, and documents;
- (7) rare manuscripts and documentary monuments, archives, including sound recording, video recording, photo and film archives;
- (8) musical instruments;
- (9) postal stamps either separate or in collection, and other stamp materials;
- (10) antique objects — tools, ceramic items, inscriptions, coins, orders, medals, seals, weapons, as well as other objects envisaged for a collection;
- (11) botanical, zoological and geological collections and specimen; objects of mineralogical, anatomical and archaeological interest;
- (12) furniture, Gobelin tapestries, rugs, carpets, and national costumes;
- (13) ethnographic, anthropological materials and unpublished collections of folkloric materials; antique prints;
- (14) component parts and fragments of monuments of architectural and monumental art;
- (15) other objects, including copies of other historical, artistic, scientific or cultural value which are under state protection as historical and cultural monuments;
- (16) vehicles manufactured before 1951.

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2025թ. հուլիսի 22-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Հունաստանի Հանրապետության կառավարության միջև մշակութային արժեքների հափշտակումը, անօրինական պեղումները և ապօրինի ներմուծումը, արտահանումը և դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը կանխելու և դրանք իրենց ծագման երկիր ռեստիտուցիայի մասին» համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի պահոցում (դեպոզիտում) պահվող բնօրինակի նույնական պատճենն է:

**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարության
միջազգային պայմանագրերի և
իրավունքի վարչության պետ**



Նելլի Սարոյան